ՀՐԱՉՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Հրաչյա Թամրազյանը ծնվել է 1953 թ. դեկտեմբերի 5-ին Երևանում: 1971 թ. ավարտել է Երևանի Ն. Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցը, 1976 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, 1977 թ. աշխատանքի է անցել Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ նախ որպես ավագ լաբորանտ, ապա կրտսեր ու ավագ գիտաշխատող: 1988–91 թթ. Հրաչյա Թամրազյանն աշխատել է «Սովետական գրող» հրատարակչությունում՝ որպես գլխավոր խմբագիր, իսկ 1991–1993 թթ. զբաղեցրել է «Նաիրի» հրատարակչության տնօրենի պաշտոնը, 1986 թվականից գրողների միության անդամ է: 1993 թ. նշանակվել է ՀՀ կառավարությանն առընթեր հրատարակչական գործերի վարչության պետ, իսկ 1995–1997 թթ. ղեկավարել է ՀՀ տեղեկատվության նախարարությունը: Հրաչյա Թամրազյանը 1997–2007 թթ. համատեղությամբ աշխատել է որպես «Նաիրի» հրատարակչության տնօրեն և Մատենադարանի ավագ գիտաշխատող: 1999 թ. ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2007 թվականից զբաղեցնում է Մատենադարանի տնօրենի պաշտոնը: 2014 թվականից Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ է:

Թամրազյանը մեծ ավանդ ունի գրականագիտության, հայ միջնադարյան մատենագրության ուսումնասիրման և հատկապես նարեկացիագիտության բնագավառում: Նա տասը գիտական մենագրությունների և հիսունից ավելի հոդվածների և ուսումնասիրությունների հեղինակ է: Թամրազյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել նաև Մեսրոպ Մաշտոցի, Դավիթ Անհաղթի և Դիոնիսիոս Արեոպագացու փոխառն-

չությունների, Կիլիկիայի գրական դպրոցի ներկայացուցիչներից Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի, Ներսես Լամբրոնացու, ինչպես նաև Կոստանդին և Հովհաննես Երզնկացիների, Վարդան Անեցու և այլոց մատենագրական ժառանգությունը: Հրաչյա Թամրազյանը նաև ճանաչված բանաստեղծ է, թարգմանիչ: Նրա բազմաթիվ բանաստեղծական և թարգմանական ժողովածուները ջերմ ընդունելության են արժանացել ընթերցողների և գրականագետների շրջանում: Նրա թարգմանությամբ առանձին ժողովածուներով լույս են տեսել Ս. Եսենինի, Վ. Մայակովսկու, Բ. Պաստեռնակի ստեղծագործությունները, «20-րդ դարասկզբի ռուսական բանաստեղծությունը» ժողովածուն: Վերջին տարիներին Մատենադարանում կատարված ծավալուն աշխատանքների, բարեփոխումների, ձեռքբերումների ոգեշնչողը, առաջնորդն ու անմիջական մասնակիցն էր Հրաչյա Թամրազյանը: Հատկապես ձեռագրային ֆոնդի հարստացման գործում այդ տարիներին աննախադեպ արդյունքներ գրանցվեցին: Մատենադարանի ձեռագրային հավաքածուն Հ. Թամրազյանի տնօրինության տարիներին ավելացավ շուրջ 2000 միավորով, իսկ ձեռք բերված արխիվային վավերագրերի թիվն անցնում է 30000 միավորից: Իր գիտական և գրական գործունեության համար Հրաչյա Թամրազյանն արժանացել է բազմաթիվ մրցանակների և պետական պարգևների: Հրաչյա Թամրազյանի ցավալի կորուստը հայ մշակույթի ու գիտության ասպարեզների համար մեծ ցավ է: Մեր խորին ցավակցությունն ենք հայտնում Թամրազյան ընտանիքին, մերձավորներին, ընկերներին ու երկրպագուներին:

Կառավարական հանձնաժողով

«Հայաստանի Հանրապետություն», 06. 09. 2016